

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

ՇՏԵՄԱՐԱՆ. - ՄԱՌԱՆ. - ԽՈՀԱԿԵՐՈՑ. - ՏԱՃԱՐ. -

ԸՆԳԷԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարենի եւ կերակրոց վերաբերեալ մեր ուզած բոլոր տեղերը տեսնելու համար՝ չենք կարող հին Հայաստանի մէջ որ եւ է տան մը դուռը բախել անխտիր: Ինչ որ էր «մեծատան» բնակարանը ներքին բաժանմամբք եւ ընդարձակութեամբ, բնական է որ նոյնպէս չպիտի լինէր «աղքատին» յարկը: Սա՛ «ոչ պէտս ունի քաղու՛ շինուածոց, ոչ պէտք են նմա փականք աղիւից», կ'ըսէ հեղինակ մը, որոնք յատուկ էին հարստին (Մանդ. 73), ամփոփելու եւ ապահովելու համար անոնց մէջ՝ միւսին զլացուած եւ իրեն շնորհուած բոլոր բարիքները, եւ զետեղելու հոն իւր ձիերն ու եզները: Իսկ այս ամենին պահպանութիւնն յանձնած էր խածատող շներու, որոց սարսափը, կը յարէ մանրապատում բեմախօսը, կը վարանեցնէր զմու-